Արձանագրություն N 2

*«ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

*ք. Երևան* 08.05.2019թ. ժամը՝ 12:00

Մասնակցում էին.

**Հանձնաժողովի նախագահ՝**

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ — Արթուր Մկրտչյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության պետ — Վլադիմիր Թամրազյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ — Սուրեն Պետրոսյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հրազենման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ — Խաժակ Թոնոյան

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության մասնագետ բնական գիտությունների բնագավառի — Սամվել Մերուժանյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ — Ռոզա Ասատրյան

*1. «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին*

---

Ընդունել ի գիտություն, որ

1.1 *«ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6»* ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, 2019թ.-ի մայիսի 7-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք հասցեում: Համակարգի միջոցով հայտ էր ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| hh | Մասնակիցների անվանումները | Էլ-փոստ |
|---|---|---|
| 1 | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ | Standartner mail-Sarm.cjsc2019@gmail.com |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.2 Մասնակից «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը (Հավելված N 1՝ Դիմում գնանշման հարցմանը մասնակցելու, Հավելված 2՝ Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին, Հավելված 2.1՝ Տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին, Հավելված 3՝ Հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին, Հավելված 4՝ Գնային առաջարկ) առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.3 Մասնակից «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները հետևյալ են

| Չ/Հ | Գնման Առարկան | Նախահաշվային Գինը | Մասնակցի անվանումը | Գինը Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Խաղալիքների 40 փորձանմուշի փորձարկում | 1200000 | «Ստանդարտներ ի ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 713333.33 | 142666.67 | 856000 |
| 3 | Օծանելիքակոսմետիկական արտադրանքի 24 փորձանմուշի փորձարկում | 600000 | «Ստանդարտներ ի ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 498000 | 99600 | 597600 |
| 5 | Դիզելային վառելիքի 40 փորձանմուշի փորձարկում | 2000000 | «Ստանդարտներ ի ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 1660000 | 332000 | 1992000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.4 «ՎԱԾՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. «ՎԱԾՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգի նիստի արդյունքների ամփոփման մասին

---

2.1 Հանձնաժողովը որոշեց.

Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին, որպես Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակից

| Չ/Հ | Մասնակիցների | Մասնակցի անվանումը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | գրավեցրած տեղերը | |
| 1 | 1 | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.2. Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել։

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.3 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը։

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0։

### 3. «ՎԱԾՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.1 Հանձնաժողովը որոշեց «ՎԱԾՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող օրը ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք հասցեում։

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0։

| Հանձնաժողովի | | | |
|---|---|---|---|
| Նախագահ՝ | Արթուր Մկրտչյան | ԳՊ/ԳԱՊ | [signature] |
| Անդամներ՝ | Վլադիմիր Թամրազյան | ԳՊ/ԳԱ | [signature] |
| | Սուրեն Պետրոսյան | ԳՊ/ԳԱ | [signature] |
| | Խաժակ Թոմյան | ԳՊ/ԲԱ | [signature] |
| | Սամվել Մերուժանյան | ԳՊ/ԲԱ | [signature] |
| Քարտուղար՝ | Ռոզա Ասատրյան | ԳՊ/ՄՀՍ | [signature] |